

153. Տեսան Ներսիսի ասացեալ վասն ննջեցելոց. Յ շարական։ Երկուսն արձակ—նոր. խոկ ես ասացի ի վերանալ յինչո՞ւ մինչև վերջը չկայ. 202 Ա—Յ ոչինչ չունին։

154—161. Կարգ օրհնութեանց Յարութեան Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի. Ա.Զ—Դ.Կ. 8×10=80 շարական. բոլորը կրծատ—հին. 202 Ա ունի։

162. Արմելք գերարդին. 1 շարական. չկայ ոչ 1588-ում և ոչ 202 Ա—Յում. Ը է լրացնում։

Այս ամենպական բաղդատուրեան արդիւնքը կարելի է ամփոփել հետեւեալ կերպով. մեր արդի 1166 շարականներից ԺԴ—ԺՊ դարի մի աւանդութիւն կամ սոյն համար 1588 ձեռագիրը 862-ը կամ ամբողջի մօս երեք բառորդը համարում է հին. այսինքն Ներսոս Շնորհալուց առաջ գրուած, խոկ մնացեալ 304.թ կամ ամբողջի մի բառորդից մի փոքր աւելին նոր են. այսինքն Ներսոս Շնորհալու, իւր ժամանակակիցների և լետորդների գործ։

Կը շարունակուի.

Ներսօս վարդապետ Տէր-Միքայէլեան

— 55 —

Ն Ա Խ Ն Ե Ա Յ Ց Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Բ

ի.

Բայց մեր առանձին ուշադրութիւնն են զրաւում աւետարանի գեղարուեստական զարդարանքների մնացորդները. ձեռազրի սկզբում եղած խորանազարդերն ու աւետարանիչների պատկերներն իրենց սկզբնազարդերով եթէ մնացած լինէին, հայ մանրանկարչութեան լաւագոյն և հնագոյն յիշատակարաններից մէկը կունենայինք։ Տարաբաղդաբար, ինչպէս և վերև ակնարկուեցաւ, ժամանակի և տղիտութեան զոհ են դնացել պատկերների մեծագոյն մասը։ Անկորուստ պահուած պատկերն ու զարդերը հետևեալներն են. 82թ. Մարկոս աւետարանիչ, 83ա. Մարկոսի սկզբնազարդն ու առիւծը, 135ա. Դուկասի սկզբնազարդը։ Լուսանցազարդեր առհասարայ չունի մեր աւետարանը. միայն Յովհաննու մէջ սկսուում են երկգոյն, փոքրիկ զարդեր, կանաչ և կարմիր գոյներով եռատերեններ, մեծ մասով հորիզոնական խարսխի վերայ. Երբեմն նրանք զոյգ են և

հակադիր, մէջը գրուած զլիսաբաժանման զիրը։ Մի տեղ միայն 219^{ա.} այդ զարդը փոքրիկ արմաւենիկ է և ոչ եռատերեւ։ Այս լուսանցազարդերը ճիշդ նոյն արուեստի զրոշմն են կրում և իրենց գոյներով միանգամայն համապատասխան են Դուկասի սկզբնազարդի գորգաձեւ շրջանակին, որի նկարագրութիւնն ու գնահատութիւնը կտեսնենք քիչ յետոյ։

Մարկոս (նկար 2.) նստած է բարձրաթիկունք բազկաթոռի վերայ. զլուխը ծածկուած է սև և կարճ մազերով և շրջափակուած ոսկէ պսակով (nimbus). միրուքն ու բեխերը նոյնպէս սև, միրուքը կլոր։ Հագել է կապոյտ կապայ (tunica) լայն թեկերով, կապայի ծալքերը արտայայտուած են բնական և զեղեցիկ, նուրբ, սպիտակ գծերով և կապոյտի թանձը ու բաց երանգաւորութեամբ։ Աջ թեկի վերայ կապուած է կարմիր ոսկեզարդ ժապաւէն, արքայական կամ իշխանական նշաններից մէկը, որ յաճախ գործադրուել է և մանրանկարչական պատկերազրութեան մէջ։ Չախ ուսի վերայից ձգուած է վերնազգեստ (toga), որ պատելով մէջքի ներքին կէս մասը, ծածկում է ոտքերն ամբողջապէս մինչեւ սրունքները։ Վերնազգեստի փեշերը ձըդուած են ձախ ձեռքի վրայ, որով բռնել է բաց արած, ոսկեզօծ աւետարանը, յենած ծնկների վերայ, իսկ աջում բռնել է զրիչը։ Ոտները զրած է մէկ մէկու վրայ բնական և վայելուշ զիրքով հագած ունի սանդալներ։ Ոտքերի տակ փռուած է կմնաչ մակերեւութով և կարմիր խաչերով զարդարուած մի զորգ, ականազարդ պատուանգանի վրայ։ Յատակը, որի վրայ զրուած են աթոռն ու պատուանգանը, կանաչ է։ Աւետարանչի առաջ նկարուած է մի սեղան, վերան ձեռքի թեթեւ տապր և դանակ, խոր ընկած երկու թանաքաման, կարմիր և սև թանաքով լցուած։ Աեղանի կողքում ամրացած է բարձր ձոր, որի վրայ հաստատուած է զրակալ, ոսկեզօծ կողերով բաց աւետարանով։ Աթոռի ձախ կողքից բարձրանում է լուսամուտով մի աշտարակի, որ վերջանում է ատամնաձեւ զարնէզով։ տանիքի վրայ, շէնքի ճակատին կազմուած է լուսնեակներից կազմուած

Հովհարանման մի ճակատ, միւս կողմից բարձրանում է, մի կոթող, ծայրը փոքր դժբեթ, վե խաչով:

Այս բոլորն առնուած է մի քառանկիւնի շրջանակի մէջ. ներքին հորիզոնական կողը պարզ տախտակ է, կարմիր ֆօնով, կտրատուած՝ եռանկիւնիներ կազմող զիկզակ գծերով: Այս հիմքի վրայ բարձրանում են երկու պարզ սիւներ, շրջանակի աջ և ձախ կողերը, ականթի խոյակներով, ամփոփուած երկու, ատամնաձե գարնեղներով տախտակների մէջ: Երջանակի վերին կողը մեանդր (méandres) յիշեցնող մի զարդ է, բայց ոճաւորած (stylisé): Այդտեղ ամբացրած են երկու օղեր, որոնց միջով անց է կացրած և երկու կողմից կախած մի շալ երկու ծայրերը և մէջ տեղը ոսկով բանուած. շալի վրայ ևս հաւասարակող ոսկէ խաչեր կան և արմաւենիկը յիշեցնող զարդարանքներ:

Մարկոսի սկզբնազարդի (նկար 3.) կեղրոնը առիւծն է իւր յարակից մասերով: Առիւծի աջ թեն սկսւում պարանոցի և ուսի սահմանից և ժապաւէնի նման նախ գալարւում է մէջքի վրայով դէպի ցած, անցնում յետեի ոտների միջով և վեր բարձրանում կազմելով Ստառի մի կողը. միւս թեւը ուղղակի վը է բարձրանում նոյն տառի միւս կողը կազմելու համար: Առիւծի բարձրացրած զլուխը մարմնի հետ և աջ թեւի ներքին մասը Ս.-ի կողերը միացնող կամարն են կազմում: Առիւծի պոչը կախ է ընկած և երկու ոտների միջից անցնելով՝ փորի տակից տարածւում է մինչեւ առաջին ոտները: Առիւծը առաջին ձախ թաթով բռնել է ոսկեկող, ականակուռ աւետարան: Գլխին լուսոյ պսակ ունի: Վեր բարձրացրած թեւերի մէջ կանգնած է անմորուս և զլսի երկար մազերով մի պատանի, որ ձախ ոտքը դրել է առիւծի զիմին, իսկ աջը ազգըների վրայ. տարածած ձեռքերով բռնել է առիւծի երկու թեւերը: Պատանին հազել է մոյդ կապոյտ կապայ և աջ ուսից դէպի ցած սպիտակաւուն՝ աւելի ճիշդ գորշ վերնազդեստ. աջ թեւին՝ ուսին մօտ, ունի ոսկի ժապաւէն, իշխանական նշանը: Գլխին

ունի լուսոյ պսակ, կարմիր խաչով, մի կողմից «Յիսուս», միւս կողմից «Քրիստոս» զբաձ:

Սկզբնազարդի ճակատը զարդարում են եռակամար-ների վրայ կազմուած երկրաչափական ութ, վեց և չորս անկիւնանիներից բազկացած վանդակներ. քառանկիւնինե-րի կողերն ու անկիւններից դուրս եկած գծերը դառնում են հետեւեալ վեց և ութ անկիւնու կող'ը, կազմելով՝ / բար ցանցածեւ կտրող գծերից՝ երկրաչափական ձեւեր. այսպի-սով իւրաքանչիւր ութանկիւնու կեղրոնում կազմում է մի քառանկիւնի, մէջը չորս կէտերից կազմուած խաչով. քառանկիւնու չորս կող'ը հանդէպ մի մի վեցանկիւնի: Իւրաքանչիւր գիծ կազմուած է ոսկիր կապոյտ, ոսկի գոյշ-ների դասաւորութեամբ, իսկ ցանցեր: մէջ եղած հար-թութիւնները լցուած են փոքրիկ, կանաչաւուն արմաւե-նիկներով, որով վանդակների այդ հիւսուածքը երփնե-րանդ և ակնահաճոյ պատկեր է ստանում: Վանդակածեւ զարդի աջ, ձախ և վերին կողերի շրջանակը կազմուած է կապերտի դարդերից: Սկզբնազարդի վերին ճակատում եր-կու արմաւենիկների մէջ նկարուած է մի անօթ, մէջը ծաղիկ. անօթի երկու կողմից Տ տառի ձեւով երկու զար-դերը որոնք անօթի ունկներն են կազմում: Արմաւենիկ-ների աջ և ձախ կողմից երես առ երես կանգնած են մի կաքաւ և մի պոչը հաւաքած սիրամարդ: Եռամասնեայ կամարների մէջ և երեսի մնացած մասում կապոյտ գրերով ոսկի մակերեւութի վրայ և կարմիր գծերի մէջ զրուած է. «Աւետ | արան ըստ Մար | կոսի | սկիզբն աւետ | արանի Յիսուսի Քրիստոսի | որդւոյ այ որ | պէս եւ գրեալ է | ի մարդարէս ահաւասիկ»: Եռակամարը արարական կոչուած ճարտարապետութեան դրոշը է կրում, մի քառորդական երկու կամարների վրայ հանգչում է Յիսուսի ական երրորդ՝ կեղրոնական կամարը:

Դռւկասի եզր (նկար 4.) նյոյնպէս թեաւոր է, բայց թե երը գէպի ներքեւ թողած: Առաջին ձախ ոտով գրկել է ոսկեկող, ակնազարդ գիրք, գլխին լուսոյ պսակ ունի: Խա-

բիստների վրայ հանգչող կրկնակամարի տակ եղած տարածութեան մէջ զրուած է աւետարանի վերնազիրը և սկզբնաւորութիւնը. «Աւեւ տարան ը և ստ Դուկասու Քանզի բազումք | յաւժարեցին | վերստին կարդել զատ | տմութիւնս վաս | ն իրացն հաստատելոց ի» | : Կրերը կապոյտ են, եզերուած նուրբ, սպիտակ գծով, ոսկի մակերեռութի վրայ և կարմիր տողերի մէջ:

Մինչգեռ Մարկոսի սկզբնազարդի կամարի վերին շրջանը ական է և աւելի պայտին մօտեցող, Դուկասինը պարզ կիսաշրջան է: Եռակամարների վերայ նկարուած սկզբնազարդը հետեւալ նկարազրութիւնն ունի ներքեցից վերև: Երկու կողմից նկարուած են մի մի արագիլ բարձրացրած զլխով, նոցանից էլ բարձր մի մի վայրի հաւ (ֆասիան), գուցէ և փիւնիկ, որոնք հանգչում են ոստիկների վրայ և կտցով բռնել են կամարի կիսաշրջանի զլխին, սկզբնազարդի կեզրոնում՝ երկզլխանի և չորս ոտնանի արծուի վերին ոտները, իսկ անկիւններում մի մի կանացի զլխով թռչուն՝ պարիկ, զլուիններին պսակ զրած, յետեից ծածանուող ծաղկազարդով: Թռչունների մէջ եղած տարածութիւնը զարդարուած է ոլորապոյտ ցողուններից դուրս եկած տերեններով, եռատերեններով և ծաղիկներով: Բաւն սկզբնազարդի աջ և ձախ շրջանակները կազմուած են սուր կիպարիսանման եռատերեններից, միջինը երկար և անկիւններում զնտակ յիշեցնող մուղ կարմիր բծերով. այս եռատերենների սուր ծայրերը դէպի վեր են ուղղուած, իսկ վերին շրջանակի կողը կազմուած է իրար կապուած եռատերեններից և բաժակաձև ծաղիկներից, ցողուններն իրար հետ զիրլանգանման կապուած: Սյստեղ եռատերենների թերթերն հաւասար են, բայց ունին դարձեալ նոյն զնդականման կարմիր բծերը: Երջանակի ներքին կէս մասը, ուր զետեղուած են եզն ու աւետարանի սկսուածքը, կազմուած են կապերտազարդերից: Սկզբնազարդի վերին ճակատի կեզրոնում նկարուած է պատուանգանով, արտաքուստ կլոր, և մէջը իսաշաձև մի անօթ, ջրով լցուած. անօթի միջից ծաղիկներ են դուրս եկած, իսկ

պատուանգանի երկու կողմից նկարուած է, մի մի փոքրիկ արմաւենիկ: Անօթի աջ կողմից մի սիրամարդ ջուր է խմում, իսկ ձախից մի ուրիշը զբուխը յետ է դարձել և իւր փռած պոչին է նայում: Եթէ Մարկոսի պատկերը մանրանկար-չական պատկերագրութեան գեղեցիկ արդիւնքներից մէկն է, Դուկասի սկզբնազարդը գեկորատիւ և սիմբոլիք արուեստի լաւագոյն օրինակներից մէկը: Գծերի աղատ և համարձակ շարժումը, գոյների գասաւորութիւնը նկարչի տաղանդի և տեխնիկայի զարգացման յայտարարներն են: Պատ-կերների ֆոնը խեցոսկին է, հայ մանրանկարչութեան բնու-րոշ կողմերից մէկը, մինչդեռ բիւզանդականի մէջ թերթուկին: Աչքի համար հրապուրիչ գոյնը կապոյտն ու սպիտակն է, համընթաց գծերով:

Այս նկարագրութիւնից պարզ է, որ մեր առաջ է զրուած արևելեան—հայկական արուեստի մի գեղեցիկ գործ, տարաբաղդաբար փոքր մնացորդներով մեր ձեռքը հասած: Մարկոսի պատկերը, շրջանակի վերին կողի ոճաւորած մեանդրը, սիւների ականթաձև խոյակները, բարձրաթիկունք աթոռը բիւզանդական է, աւելի ճիշդ հելենական-փոքր ասխական, որ բուն արևելեան-տառա-պարսկական մոտիւների հետ, իսկզբանէ անտի իւր հետքերն է թողել մեր ճարտարապետական և մանրանկարչական ար-ուեստի մէջ, այն ինչ սիւների խարիսխները հայկական են, իսկ ըջանակի ներքին կողի զիկզակները արևելեան, զործածական Ասորեստանում արուեստի մէջ և նոյն իսկ Արմաւրի բլրի շրջակայքից հանուած խեցեղէնների վրայ: Մարկոսի և Դուկասի սկզբնազարդերի մէջ գերակշուղ են զուտ արևելեան* մոտիւնները. Մարկոսի սկզբնազարդի վանդակների երկրաչոփական ձևերը պարզ պարսկական դրոշմ են կրում. մինչև այժմ էլ նոքա գործածական են արևելքում. Էջմիածնի գմբեթիներսի պատշգամբի մոտիւններից մէկը ճիշդ նոյն է Մարկոսի վանդակների հետ: Եր-

* Արևելեան ասելով հասկանում ենք Պարսկաստանը, Միջա-գեուքը, Հայաստանը և Ասորիք:

կրաչափական ոյս ձևերը կրկնուած են և Ժ. զարու մի աւետարանի մէջ 1^ր և 2^ա որ զբած է Գրիգոր Գ. Պահլաւունու կաթուղիկոսութեան վերջին տարին, 1166 թուին Հռոմիլոյում։ այժմ սեպհականութիւն Ալեքսանդրապօլից ոչ հեռու գտնուող Օրթաքիլիսա գիւղի եկեղեցւոյ։ Խոյն մօտիւր կայ և մեր միաբանակից Ուխտանէս վարդապետի նորերս կարսի վիճակի Նախճաւան զիւղից Մ. Աթոռ բերած զուտ արեւելեան՝ բիւ զանդական ազդեցութիւնից իսպառ ազատ, մի աւետարանի մէջ, որ թէւ վերջին թերթն ընկած լինելու պատճառով յիշատակարան չունի, բայց զրուած է անկ + սկած ոչ ու քան Ժ. մի գարը։ Արեւելեան ծաղումն ունին և վանդակների երկրաչափական ձևերի մէջ նկարուած փոքրիկ արմաւենիկները՝ պարսկական արուեստի ամենասովորական մոտիւներից մէկը։ Արեւելեան է կապերտազարդերից կազմուած շրջանակը, իսկ եռամասնեայ կամարը արաբականի ազդեցութեան են թարկուած։ Մարկոսի առիւծը իւր վեր բարձրացած թեւերով, թէւ ոճաւորած (stylisé), արեւելեան է, մինչզեռ առիւծի վերայ կանգնած Յիսուս՝ Հին [antique] օրինակից առնուած։ Փոքր Ասիայի կամ Ասորիքի վերայով մեզ անցած։ Կատակոմբաներում և Ռավեննայի մողայիկների մէջ կրկնւում է յաճախ անմորուս և պատանեկական դէմքով Յիսուսի պատկերը, իրրե բարի հովիւ, հրաշագործող կամ երկրագնդի վրայ բազմած, բայց արեւելեան ասորական ծագումով պատկերները բնդհանրապէս մորուքաւոր են։ Հայոց մանրանկարչական արուեստի մէջ երկուսն էլ քաղաքացիութիւն են ստացած։ մինչզեռ աւետարանական պատմութեան բոլոր նշանաւոր տեսարաններում մօրուքաւոր է Յիսուս, հազուազիւտ չէ և անմօրուս կմմանուէլի կամ հրաշագործող Յիսուսի պատկերը։ Վերոյիշեալ Օրթաքիլիսայի աւետարանը Մատթէոսի սկզբնազարդի ճակատին ունի կմմանուէլի մի մեղալիսն։ Այդ ձեռագիրը, թէւ թոյլ արուեստի տեխնիկայի կողմից, բայց հետաքրքրական է իւր արեւելեան մոտիւներից կազմուած զարդերով։ Բիւզանդական այնտեղ ոչինչ չենք դտնում։ բայց կմմանուէլլ (տարաբազրաբար դէմքը փոքր

ինչ վշացած) անմօրուս է, այն ինչ նոյն գարու վերջերին՝ 1193 թ. գրուած Լամբրոնացու աւետարանի կմմանու ելլը բիւզանդական է (Սիսուան Եր., 94):

Դուկասի եղբ ոճաւորած է, շրջանակը պարզ արեւելեան, կապերտի նկարներից կազմուած: Առհասարակ գորդագործութեան արուեստը արևելեան ծագում ունի և մանրանկարչական արուեստի մէջ շատ էական տեղ է բըռնում: Հայ ձեռագրերի մէջ սկզբնազարդերի շատ մոտիւները այդտեղից են առնուած, և նրանց ուսումնասիրութիւնը բոլորովին նոր լոյս պիտի տայ հայ մանրանկարչական արուեստը հասկանալու: Գորգագործութեան արուեստի հետքերը նկատելի են ոչ միայն մանրանկարչութեան, այլ և նոյն իսկ որմաննկարչութեան մէջ: Այդ ազգեցութիւնը արեւելքից անցնում է բիւզանդացիներին: ԺԴ. գարում, երբ արդէն բիւզանդական արուեստը աւելի նկատելի հետքերէր թողել հայ որմաննկարչութեան մէջ, արևելեան մոտիւներն ել համբնթաց են նրա հետ: Դորս ապացոյց կարող է լինել Անիի Ա. Լուսաւորիչ նկարազարդ Եկեղեցին, մինչզեռ պատկերագրութիւնը բիւզանդական է, այդ եկեղ ցումէջ կամ աւելի ճիշդ սորտ խիստ ազգեցութեան ենթարկուած, պատերի ներքին մասերը նկարուած են արևելեան կապերտի եղանակով: Բիւզանդիայից եր եկած այն, թէ տեղական էր, զժուար է հաստատապէս ասել, բայց ծագումով յամենայն դէպս արևելեան է:

Դուկասի սկզբնազարդի մէջ ևս նկատում է նոյն եռամասնեայ կամարը, ինչ որ Մարկոսի մէջ տեսանքը միայն այստեղ աւելի որոշ է արարտիան կոչուած ճարտարապետութեան կնիքը: Արևելեան գեկորատիւ արուեստի մի արտադրութիւն է այս ամրողջ գարդը իւր թռչուններով և բուսական զարդերով: Թռչունների, կենդանիների և բուսական զարդերի գործածութիւնը արևելեան մանրանկարչութեան մէջ, ի թիւս որոց և Հայոց, շատ կարևոր տեղ է բանում: գորա հնագոյն օրինակն է ասորական՝ 586 թ. գրուած՝ Բարուլայի աւետարանը (ոմանց կարծիքով որու մանրանկարներն աւելի ուշ ժամանակի գործեր են):

Հայոց մանրանկարչական արուեստը իւր կատարելութեան է՝ հասնում հենց այս ճիւղի մէջ, թէև առիթ կունենանք ուրիշ անդամ ցոյց տալու, որ ձեռազգական պատկերագրութիւնն էլ կարճ ժամանակով մեր մէջ սքանչելի արդիւնքներ ունի թողած, յատկապէս կիլիկիայում։ Այդ մոտիւնելը գործադրում են մեր արուեստի մէջ սիմբոլիք և դիկորատիւնպատակների համար։ Առաջնի ամենասովորական նիւթերն են առիւծը, եղը և արծիւը, որպէս աւետարանիների նշանակներ, * բայց սիրամարդ, կաքաւ և այլ թոշուններ, կենդանիներ ու ծառեր ևս գործադրում են այս և այն նպատակով։ Դեկորատիւն նպատակների համար սիրամարդը գործադրուած է և հայ պալատներում։ 1907 թ. Անիի միջնարերդի պեղումների ժամանակ զիբուց շինուած զանազան զարդարանքների մէջ զտնուած են նաև սիրամարդներ։ **

Թովմա Արծրունին եր. 332 (Կ. Պօլիս. 1852) Գաղիկ Արծրունու պալատի նկարագրութեան մէջ յիշում է. «անդ երամք հաւուց զարդարեալը ի պէսպէս պաճուճանս», որոնց մէջ պիտի լիներ անշուշտ և սիրամարդը։ Աւելի մանրամասն տեղեկութիւններ է տալիս Աղթամարի եկեղեցու գեկորատիւ զարդարանքների մասին։ եր. 335։ Տիզրան Հոնենցի շինած նկարազարդ եկեղեցու հիւսիսային և հարաւային պատերի, կեղծ կամարների անդրվոյլտների մէջ քանդակուած են բազմաթիւ թոշուններ և կենդանիներ դարձեալ զարդարանքի նպատակով։

Եթէ Դուկասի այս սկզբնազարդին գժուարանքը հա-

* Աւետարանիչների նշանակների (Symbol) մասին եկեղեցական հայրերը Փ. դարից սկսած խօսում են իրենց երեկորի մէջ. բայց թէ երբ են նոքա հեղինակների հետ մտածին մանրանկարչութեան նիւթ դարձել, պարզ չէ։ Ստեփան Բայուլ (Geschichte der Evangelienbücher Freiburg i.B. 1905 եր. 49) յունական ձեռազգերի համար կարծում է Ժ. դարից, աւելի վաղ աւետարանիչները նկարում էին պարզ, առանց գեկորատիւ կամ ձարտարապետական զարդարանքների։ Հայոց մէջ նշանակները սովորաբար ոկզինազարդի մասն են։

** Անիսկայ Սերія № 2, Реестръ предметовъ древности изъ VI-й (1907) археологической кампаниі въ Ани, Н. Марръ, С. II. 1908 եր. 13

մողելու չափ սիմբոլիք բացատրութիւն տալ, աներկրայ ենք, որ Մարկոսի և Ղուկասի սկզբնազարդերի ճակատի տեսարանները խորհրդաւոր են, յատկապէս Ղուկասինը, որ կենդանի աղբիւրի գաղափարն է ներկայացնում։ Զլիներ երկլիւանի և չորս ոտնանի արձիւր, որ ծագումով գեկորատիւ պիտի լինի և ոչ խորհրդանիշ, մենք հակուած էինք նոյն իսկ ամբողջ սկզբնազարդի և նորա ճակատազարդի մէջ վերացական դրախտի պատկերը տեսնելու ջրով լի անօթը կամ աւազանը կենդանութեան աղբիւրն է, որին ծարաւի են անմահութեան հոգիները։ Սիրամարդը ընդունուած է որպէս անապականութեան նշանակ (symbol) քրիստոնէութեան հին արուեստի մէջ։ Ջրով լի անօթը արմաւենիկների հետ սիրամարդներով յաճախ կրինւում է ասորական և հայոց արուեստի մէջ։

Կենդանութեան աղբիւրի գաղափարը մեր մանրանկարչական արուեստի մէջ արտայայտուած է բազմատեսակ եղանակներով։ Ուխտանէս վարդապետի բերած Նախնաւան դի դի աւետարանի մէջ 2ր կենաց աղբիւրը ձեւցրած է անտիկ արուեստի աղդեցութեամբ։ Խորանի ճակատին, վերին լուսանցքում չորս ականթի խոյակներով սիւների վերայ կանգնած է սեղան, որի երկու կողմից դէմ առ դէմ երկու կաքաւ։ Նոյն ձեռադրի 4ր երեսում մի տախտակի (պլիտայի) վրայ կանգնեցրած է ականակուռ աւետարան։ աջից մի թռչուն նայում է դէպի աւետարանը, իսկ ձախից մի այլ թռչուն գլուխը յետ է գարձրել։ Օրթաքիլիսայի 1165 թ. գրուած աւետարանի խորանների ճակատները նոյնպէս մօսամբ զարդարուած են այս ն' թի այլ և այլ ձեւակերպութիւններով։ 1ր նկարուած է մի անօթ, աջից մի սիրամարդ, պարանոցը երկարացրած, իսկ ձախից մի այլ սիրամարդ՝ պոչը վեր բարձրացրած և փռած, գլուխը բարձր։ 2ր նկարուած է կեղրոնում մի պատուանգանով խաչ, իսկ երկու կողմից պոշերը երկարաբութեամբ փռած մի մի սիրամարդ, որոնց պարանոցները փաթութուած են խաչի ձողին։ 3ր և 4ր անօթի ձախ կողմից մի սաղ փռել է թեերը և գլուխը յետ դարձրել կանչողի

շարժումնվ, իսկ աջից մի ջայլամ է։ ևսայի նշեցու համար բաղմավաստակ Յովհաննէս Երզնկացու ձեռքով 1318 թ. զրած և Թորոսի Նկարած № 182 Աստուածաշնչի խորանազարդի ճակատին 442 ա. Նկարած է աւագան կամ ազրիւր Ներկայացնող անօթի մէջ հաւասարակող մի խաչ, իսկ սիրամարդերի փոխարէն աքաղաղներ, որոնք ջուր են խմում։ 441^թ ազրիւրը պատկերացրած է երկու սիւների և քարէտախտակի վերայ հաստատուած առիւծի երկու զլուխներով, որոնց բերանից ջուրը թափւում է անօթների մէջ, իսկ սագանման թռչունները խմում են։ Ազրիւրի կողքերից բարձրանում է մի մի ծառ, որոնք հաւանօրէն արմաւենի են ներկայացնում։ Կենդանութեան ազրիւրի զաղափարը նիւթ է գարձել և հայ ճարտարապետական քանդակագործութեան մէջ, Թանահատի վանքի հարաւային պատի վրայ Հովհարանման մի զարդի զլսին (ըստ Ալիշանի արեւի ժամացոյց, առանց տառերի. Սիսական եր. 120) կանգնած է սկիհանման մի անօթ, որից երկու թռչուն դէմ առ դէմ ջուր են խմում։ Ճիշդ նոյն մոտիւր կայ կոպտական արուեստի մէջ։*

Հատ հետաքրքրական է արծուի գործածութիւնը մեր տրուեստում։ Վաղ ժամանակներից նա քրիստոնէական մատենագրութեան մէջ հին կտակարանի ազդեցութեամբ ընդունուել է որպէս զօրութեան, արագութեան և նորոգութեան նշանակ (Սաղմօս ձԲ, 5): Երկրայական է միայն, որ Դ. գարից սկսած արծիւների գործածութիւնը զարդարանքներից զատ՝ խորհրդաւոր նշանակութիւն ունեցած լինի։* Հայ ճարտարապետական քանդակագործութեան սիրելի նիւթերից մէկն էր այն. չյիշելով Զուարթնոց եկեղեցու հրաշալի խոյակները է. գարում, բազմաթիւ են թեատարած արծուէքանդակները մազիլներում բռնած խոյով աւելի ուշ ժամանակներում։ Եթէ կասկածելի (գուցէ աղաւնի) համարենք Անիի Մայր եկեղեցու հարաւային պատի քանդակները, հաստատ արծիւ է հիւսիս-արևեմտեան-

* Տես Սմբատեան և Եր. Լալոյեանի Վայոց Զորի վանքերի լուսանկարչական ժաղավածուները։ Raufman, Chr Arch. եր. 113.

** Kraus. Geschichte der Christlichen Kunst I. եր. 110.

պարիսպների վրայ եղած քանդակը մազիլների մէջ բռնած գառով։ Փափաղեանի «Հնութիւնք Հայրենեաց» Դ. զրբում՝ Պարսկաստանի Նախավկայի վանքի արեւելեան պատի վրայ ևս կայ ենդաւոր մի արծիւ մազիլներում խոյ բռնած։ Առկայն աւելի բազմաթիւ են նրանք Վայոց Չորի և Պռօշեանց ձեռքով շինած ճարտարապետական յիշատակարանների վրայ, գոցանից մէկը Ալիշանն ունի Այրարատի մէջ, եր. 351 և 343։ Եալայեանի Վայոց Չորի լուսանկարչական ժողովածուի մէջ Հերհերի, Թանահատի և Յանացքար վանքերի վրայ կրկնուած են նոյն քանդակները։ Զընծոլու զիւղի Սպիտակաւոր Աստուածանի բակում մի թեատրած մեծ արծիւ կայ քանդակուած խոյը մազիլների մէջ։ Եկեղեցին շինուածէ ԶԾ=1301 թուին Տարսայինի որդի Զալալ իշխանի ամուսին Քոնցայի համանով «ի ձեռն ըստ հոգոյ որդոյ մեր (Զալալի և Գոնցայի) Կիրակոս վղի։» Մի ուրիշ արձանագրութիւնից աւելի պարզում է, այս Կիրակոսի անձնաւորութիւնը։ Ես Կիրակոս վրդ Գետկեցի։ անձամբ և ընչիւք աշխատեցա ի շինութիւն վանացս».. Շատ կետերով հայկականին մօտ կոպտական արուեստի մէջ ևս Զ—Բ. գարերում ճարտարապետական և փայտի քանդակագործութեան մէջ գործածական էր արծիւը։*

Աւելի հազուագիւտ են երկզիւանի արծիւները. մինչեւ այժմ յայտնի են երկուսը. մէկը մի խաչքարի վրայ քանդակուած, ըստ Ալիշանի Անիի արքունի ապարանքում գտնուած (Շիրակ եր, 142), միւսը՝ Առաքելոց Եկեղեցու գաւթում, որ յայտնագործել է պրովեսոր Մառը **, ւրկուսն էլ ոչ ուշ, քան Ժ—ԺԴ. գարու գործեր։ Տարաբարաբար հայերէն Ժ. գարից այն կողմն անցնող թուականով ձեռագիր չունինք, որպէս զի հետեւել կարողանայինք, թէ Երբ է նա մանրանկարչական արուեստի նիւթ դարձել։ Մող յայտնի հնագոյն ձեռագիրը, ուր նկարուած

* Koptische Kunst v. Josef Strzygowski 1904 Leipzig, եր. 39, 59, 128.

** О Раскопках и работах въ Ани лѣтомъ 1906 г., 1907. СП. եր. 52

է, արծիւը, այս է, 1066 թուից: Վասպուրականցի Հայերը այդ մոտիւն էլ իրենց հետ Սերաստիա են տարել, ինչպէս և մանրանկարչական միւս մօտիւները: Բնդունուած սովորութեան համեմատ բիւզանդական համարելու պատճառ չունինք. ընդհակառակ այդ էլ արեւելքից առնուած մի փոխառութիւն է Բիւզանդիայում: Ինչպէս գեղարուեստի ուրիշ շատ մօտիւներ: Այստեղ ևս զորդազործութեան արուեստը իւր մօտիւներով օգնում է, մեզ հանգոյցը լուծելու: Երկզլիւանի արծիւը մինչև այժմ էլ գեռ զորդազործութեան մօտիւներից մէկն է: Բայց այս խնդրին մենք կրդառնանք մի այլ անդամ: Մեր աւետարանի արծիւը նոյն իսկ սովորական երկզլիւանին չէ, այլ և չորս ոտներ ունի: Գուցէ նա երկու արծիւների միացումը լինի, ինչպէս կարծիք յայտնեց նկարիչ Պոլտարացին: Մեր աւետարանի այս մօտիւը կրկնուած է և Օրթաքիլիսայի աւետարանի մէջ 1^ր և 2^ա խորանազարդերի կամարների ձակատին. տարաբաղդաբար երկու տեղումն էլ խոնացած, թէև նկատելի. այստեղ ևս երկզլիւանի և չորս ոտնանի արծիւների վերին ոտները կտցով բռնել են երկու երկարավիզ կարմրաւուն թոշուններ: Այստեղ ևս խորանազարդերի աջ և ձախ շրջանակերը կազմուած են կիպարիսանման, երկարացրած եռատերեներից, իսկ վերին շրջանակը եռատերեներից և բաժակածե ծաղիկներից փոխառ փոխ, սրանց ցօղունները հիւսուած էն իրար զիրլեանդածե շղթայով: Խորա անկիւններում չկան պարիկները, իսկ շրջանն էլ 5^ր ական է և ամբողջութեան կազմութեամբ բոլորովին տարբեր մեր աւետարանից:

Արծիւը նիւթ է եղել նոյնպէս հայ աւետարանների ճարտարապետական խորանների խոյակների համար. վերոյիշեալ Օրթաքիլիսայի աւետարանի 5^ր և 6 ա խորանների խոյակները զոյգ թոշուներ են, գուցէ արծիւներ, մէջ մէջքի, պոչերը կպած, բայց մարմիններն ու գլուխներն անջատ. երկուսի մէջ կախուած է մի ողկոյզ*: Նոյ-

* Արծիւներն իրեն խորանի սիւների խոյակներ կամ զարդեր գործադրուել են և կարողինդեան շրջանի մանրանկարչութեան մէջ

նը առանց ողկուզի կայ և Յովհաննէս արքայեղբօր աւ-
ետարանի մէջ: Անշուշտ այս մոտիւը իւր ծագումով ճար-
տարապետական է: Աւելի միացած են երկու արձիւները
Յովհան Երզնկացու դրած Աստուածաշնչի մէջ 442 ա.,
բաժան են միայն զլուխները, որոնց վերին մասերի և պա-
րանոցի վերայ ծանրանում է խորանազարդերի տախտա-
կը: Չորս աւետարանիշների նշանակները վաղուց խո-
յակների նիւթ են դարձել Հայոց եկեղեցական ճարտա-
րապետութեան մէջ. արձուի օրինակը տեսանք Զուարթ-
նոցում: իսկ առիւծի զլուխներ ունինք Հոփիսիմէում: Զեռազրերի մէջ եղած պատկերներից պէտք է մակարերել,
որ միւսներն էլ անսովոր չեն եղել: Յիրաւի Ամազուի Ա-
Աստուածածնի մէջ, սեղանից վերև քանդակուած է Ամե-
նակալ (Աշուաչաւաչ), որ բազմել է չորս աւետարանիշների
նշանակներից կազմուած աթոռի վրայ. աջից հրեշտակ
և առիւծ, ձախից արձիւ և եզ: Երկու թեատարած-
հրեշտակներ ձեռքերը հայ ազօթաւորի նման մեկնած՝
կանգնած են աջ և ձախ կողմից*: Չորեքկերպեան նոյն
աթոռը Ամենակալով կայ և Զընճրլուի Սպիտակաւոր
Աստուածածնի պատի վրայ և Հաղբականց ցեղից Էաչի իշ-
խանի Զիթ. թուին Խոտակերաց Ա. նշանի համար շինել
տուած ոսկեզօծ մասանց պահարանի ճակատին՝ միայն
այնտեղ տարբեր դասաւորութեամբ. աթոռի վրայ բազ-
մած Փրկչի (զլիսին խաչաձև լուսոյ պսակ և զրուած «Յ»
«Ֆ») աջ կողմից մարդ (հրեշտակ) և արձիւ, ձախից
առիւծ և եզ: Պահարանը գտնւում է Մ. Աթոռի եկեղե-
ցական թանգարանում: Աեր մանրարուեստի զեղեցիկ մնա-
ցորդներից մէկը: Առաջինը ծագել է Եղեկիելի Ա. զլ. ազ-
գեցութեամբ և հէնց չորեքկերպեանների զասւորութիւնն
էլ համապատասխան է առաջին տեսլեան, իսկ երկրորդը
Յովհաննու Յայտնութեան Դ. 7:

Բայց մենք ունինք մանրանկարչական, իսկական երկ-

ասորական արուեստի ազդեցութեամբ: Kraus Gesch. der Christ.
Kunst II. եր. 25; Beissel Gesch. der Evangelienbücher. եր 154

* Ե. Լալայիանի լուսանկարչական ժողովածու:

զլիսանի արծիւ ես, ինչպէս քանդակագործութեան մէջ տեսանք. Երզնկացու Աստուածանի Յովհաննու ճակատագարդի կեղրոնը Երկդիսանի մի արծիւ է, ոչ աւետարանչի նշանակը՝ աւետարանը մազիլներում բռնած, որ միսների հետ և տառն է կազմում. Այս բոլորից պէտք է եղրակացնել, որ արծիւը գործազրուել է որպէս զարդարանք և որպէս խորհրդանիշ:

Դուկասի աւետարանի սկզբնազարդի մէջ ուշադրութեան արժանի են և կանանց զլիսով և թռչունի մարմնով պարիկները: Հայ մանրանկարչութեան սիրելի նիւթերից մէկն է այդ՝ բազմատեսակ եղանակաւորութիւններով: Մեզ յայտնի հնագոյն օրինակը այս ձեռագրինն է Ժ. գարից, որ զլիսին պսակ ունի, իսկ պսակի յետելից փողփողող ծաղկազարդ: Ուխտանէս վարդապետի բերած աւետարանն էլ ունի մի տարօրինակ պարիկ՝ զլուխը թագազարդ: Յակորն. Ասեցու Աստուածաշնչի մէջ Գ. Յ. № 359, 280 թ., Ասրդիս Պիծակի նկարածը՝ թաթարական ազդեցութեան ենթարկուած գմբեթանման թագ ունի: Ասրդիս Պիծակի գրած և նկարած մի այլ գործ, պատկերազարդ Յայսմաւուրք, որ մեր միաբանակից Խաչիկ վարդապետի սեպհականութիւնն է, ունի նման մի պարիկ չնշին տարբերութեամբ № 363 թ.: Նոյն զլիսարկն ունի նաև էաչի իշխանը իւր շինել տուած վերոյիշեալ Ա. Նշանի պահարանի վրայ: Նշեցու Աստուածաշնչի մէջ՝ Թորոսի նկարած պարիկներն աչքի են ընկնում իրենց բազմազանութեամբ № 182, 4 ա, 264 ա, 326 ա, 476 ա, 545 ա: Վերջինը կազմուած է երկու գէմ առ գէմ թռչուններից, որոնց պարանոցները միանում են կնօջ թագազարդ մի զլիսով: Ժ. գարու գործ է նաև Ստչիգովսկու հրատարակածը իւր Էջմիածնի Աւետարանը գրքի մէջ, եր. 1., ուր թագազարդ և բաց զլիսով ձեերը կան: Ալիշանը իւր Սիսականի մէջ եր. 149 ունի մե. գարու մի գործ՝ Վայոց Զորի եղեղիս աւանում գրուած: Այս մոտիւը հազուագիւտ չէ և հայ քանդակագործութեան մէջ. Անիում Հոնենց Տիգրանի 1215 թ. շինած նկարազարդ եկեղեցու հարաւային պատի վերայ

ունենք քանդակուած նոյն մոտիւր. բայց աւելի ճոխ է և զեղեցիկ թագարանից Մ. Աթոռի թանգարանը բերուած զոյդ պարիկների նրբաքանդակը, անկասկած ոչ ուշ քան ժմ. Ժ. Պարու գործ: Նոյն դարու են և Վայոց Չորի Յուրժելաշէն Ո. Աստուածածին եկեղեցու արևմտեան կամարի անկիւնների երկու պարիկները: Այս մոտիւր գործածական էր նաև շիրմաքանդակների մէջ աւելի ուշ ժամանակում:^{*} Բայց Ստշիզօվսկու այդ մոտիւր բիւզանդական է, բայց մենք հակուած ենք եզիպտական ընդունելու, որովհետեւ այդ ազգերի արուեստի մէջ գործածական են կենդանու և թուշունի մարմիններով և մարդկային, յատկապէս կանանց, զլսով ֆիգուրները: Եզիպտական—կոպտական արուեստն էլ առանց ազերսի չէ հայ արուեստի հետ:

Յարունակելի

Գարեգին Վ. Յափէփեան

ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՀԱՆԴՐԻԹԻԻՆԸ

ՏԱՐՅԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ա Զ Դ

Այս աշխատութեան նպատատակն է Արարատի ընթերցողներին ծանօթացնել Ձեագիտութեան Դասաւանդութեան ուսհմանում կատարուած բարեփոփոխման նորագոյն փորձերի հետ:

Այս աշխատութիւնը քաղուածաբար կազմուած է Կիհուսի, Վելքի և յատկապէս Յասիզի զանազան տեղերում (թերթերում, Էսցիկլօպեդիայում, առանձին) հրատարակած երկերից: Մասնօթութիւնների մէջ իւրաքանչիւր դէպքում մատնանշուած են հեղինակները:

* Միսական. Ալիշանի եր. 435. Փափազեան Շնութիւնք Հոյրենիաց Պ. գիրք: